ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-294-4.04.2018-ԱՍ-011/0 և Պ-2941-4.04.2018-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 479 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-294-04.04.2018-ԱՍ-011/0 ԵՎ Պ-294[1]-04.04.2018-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակահարմար չի համարում և առաջարկում է նախագծերի փաթեթով քննարկվող գործող օրենքների հոդվածները թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով օրենքների նախագծերի վերաբերյալ ստորև ներկայացված հանգամանքները՝

1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ներկայացված առաջարկությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) կարգավորման առարկա չի հանդիսանում: Մասնավորապես, օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ այն կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության նպատակն աշխատողների և գործատուների իրավունքների ու շահերի պաշտպանությունն է: Նախագծով ներկայացված առաջարկությունը չի համապատասխանում աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերությունների ձևավորման (13-րդ, 83-րդ հոդվածներ) կարևորագույն սկզբունքին:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները, այդ թվում՝ աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը:

Տեղին է նաև նշել, որ օրենսգրքում աշխատավարձին հավասարեցված հատուցումներ նախատեսված չեն: Աշխատավարձի կառուցվածքում ներառված տարրերը (հիմնական և լրացուցիչ աշխատավարձ) ամբողջությամբ սահմանված են օրենսգրքի 178-րդ հոդվածում, իսկ «մաքուր աշխատավարձ» հասկացություն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է աշխատավարձի չափի օրենսդրական կարգավորմանը, ապա հարկ է նշել, որ գործող օրենսդրությամբ նախատեսված է միայն նվազագույն ամսական աշխատավարձի չափի սահմանում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձի, գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար սահմանված ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարներ:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճար չեն վճարում այն աշխատողները, որոնց աշխատավարձը՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո չի գերազանցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատա-

վարձի չափը: Այս աշխատողների փոխարեն դրոշմանիշային վճարները վճարում են գործատուները՝ իրենց միջոցների հաշվին:

Աշխատավարձի հարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով: Այս տեսանկյունից անհասկանալի է նախագծով ներկայացված այն արտահայտությունը, որ հարկատու ֆիզիկական անձի կողմից ստացվող մաքուր աշխատավարձի գումարը կամ աշխատավարձին հավասարեցված այլ հատուցումը չի կարող նվազել տուրքերի կամ այլ պարտադիր վճարների բարձրացման հետևանքով՝ հաշվի առնելով, որ ֆիզիկական անձանց կողմից ստացված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից գործող օրենսդրության համաձայն չեն առաջանում պարտավորություններ տուրքերի գծով:

2. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հարկ է նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է: Կենսաթոշակի աշխատանքային մասն աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի և կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է: Զինվորական կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար օրենքով սահմանված աշխատավարձի գործակցի արտադրյալի և զինվորական ծառայության ստաժի տարիների ու զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի արտադրյալի գումարն է:

Հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և

զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը չեն կարող պակաս լինել նախկինում սահմանված չափերից:

Ըստ այդմ, օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակի չափի հաշվարկման կարգում ամրագրված մեխանիզմներով բացառվում է կենսաթոշակի չափի նվազումը:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի համաձայն՝ 2018 թվականի հուլիսի 1-ին լրանում է սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու ժամկետը: Նշված օրենքի ամբողջական կիրարկումը կարող է նպաստել հետագայում վճարվելիք կենսաթոշակի չափի ավելացմանը, բայց ոչ նվազմանը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգում պետական կենսաթոշակները և կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային (պարտադիր) կենսաթոշակները չեն հարկվում, քանի որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկի հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները)՝ բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների:

Տուրքերն օրենքով սահմանված դեպքերում և չափով վճարվում են պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայություններ մատուցելու դեպքում: Այսինքն, տուրքերը վճարվում են ծառայություններ ձեռք բերելու համար և չեն կարող ազդել աշխատավարձի և կենսաթոշակի չափերի վրա:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճար վճարում են աշխատանքային կամ քաղաքացիական-իրավական պայմանագրերով աշխատող անձինք, անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Կենսաթոշակառուն դրոշմանիշային վճար վճարող չէ, հետևաբար կենսաթոշակից դրոշմանիշային վճար չի վճարվում:

Այսպիսով, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների համակարգում կատարվող փոփոխությունները չեն կարող անդրադառնալ կենսաթոշակի չափի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2018 թվականի N 479 - Ա

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատար Արտեմ Ասատրյանին նշանակել Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-294-04.04.2018-ԱՍ-011/0 և Պ-294[1]-04.04.2018-ԱՍ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մայիսի 5
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-294-04.04.2018-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 09-ի աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«3. Հայաստնի Հանրապետությունում հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների բարձրացման հետեւանքով հարկատու ֆիզիկական անձի կողմից ստացվող մաքուր աշխատավարձի գումարը կամ աշխատավարձին հավասարեցված այլ հատուցումը չի կարող նվազել:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-294[1]-04.04.2018-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով.

«2. Հայաստնի Հանրապետությունում հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների բարձրացման հետեւանքով ֆիզիկական անձի կողմից փաստացի ստացվող կենսաթոշակի գումարը՝ անկախ դրա տեսակից, չի կարող նվազել:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

- «Ընթացիկ տարվա հունվարի 01-ից ուժի մեջ մտան Հայաստանի Հանրապետության նոր հարկային օրենսգրքի հիմնական դրույթները՝ այդ թվում նաեւ եկամտային եւ այլ հարկերի բարձրացման մասով: Ընդ որում, կառավարության կողմից չի էլ հերքվում, որ այդ գումարներն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության կողմից վերցված (եւ մեծ հաշվով ոչ նպատակային օգտագործված) վարկերն ու այլ պարտավորությունները մարելու համար:

- «Նախորդ տարվանից ուժի մեջ է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքը, որով այդ հատուցման ողջ բեռը եւս դրվում է հասարակ քաղաքացիների ուսերին:

- «Մյուս կողմից, ընդամենը մի քանի ամիս անց մասնավոր հատվածում եւս բոլորն ստիպված կլինեն մտնելու կուտակային կենսաթոշակային համակարգ:

- «Երկրում ակցիզային, ավելացված արժեքի եւ այլ հարկերի բարձրացման, ինչպես նաեւ որոշ այլ գործոնների ազդեցությամբ արձանագրված գնաճը, ըստ էության, պետության կողմից որեւէ կերպ չի զսպվում:

- «Կառավարության կողմից ընդունված 2017 թվականի օգոստոսի 24-ի 1033-Ն թվակիր որոշման ուժի մեջ մտնելով՝ դեղատնային եւ դեղագործական գործունեություն իրականացնող ընկերությունները ծանրաբեռնվել են բազմաթիվ նոր պարտավորություններով, այդ թվում՝ դեղատների աշխատակիցներին ապահովելու նույնականացման քարտերով, այդ քարտերը կարդացող սարքերով, թարմացնելու սեփական համակարգչային տեխնոլոգաները, յուրաքանչյուր դեղատանն ապահովելու ինտերնետ կապ եւ այլն: Այս որոշման ուղղակի հետեւանքն է բոլոր այդ ծախսերի բեռի տեղափոխումը վերջնական սպառողի վրա, ինչը նշանակում է, որ դեղերի եւ դեղագործական այլ ապրանքների գնաճը նույնպես անխուսափելի է:

- «Ընդ որում՝ այս ամենը տեղի է ունենում չբարձրացվող կամ չնչին չափով բարձրացվող նվազագույն աշխատավարձի եւ կենսաթոշակների ֆոնին:

Այսպիսով, քաղաքացու տնօրինվող եկամուտն ու նույն փողի գնողունակությունը վերջին տարիներին շարունակաբար նվազում են՝ նույնիսկ եթե պայմանականորեն անտեսենք ինֆլյացիայի մակարդակը Հանրապետությունում, այնինչ մինչեւ վերը թվարկված փաստերի առաջ գալը եւս Հայաստանում միջին աշխատավարձը եւ կենսաթոշակը մեղմ ասած բարձր չէին:

Մեր երկրում կատարված աշխատանքի դիմաց ոչ արդարացի վարձատրությունը համարվում է արտագաղթի հիմնական պատճառներից մեկը. հայտնի փաստ է, որ միջին եկամուտներ ունեցող հայաստանյան ընտանիքն իր ստացած եկամտի մեծ մասը ծախսում է սննդամթերքի, կոմունալ վճարների եւ այլ առաջնային կարիքների ուղղությամբ: Բազմաթիվ ընտանիքներ, ունենալով օրինակ բնակտարածության խնդիր, տարիներ շարունակ չեն կարողանում լուծել այդ հարցը, նույնկերպ չեն կարող իրենց թույլ տալ մեկնել անգամ ամենահամեստ հանգստին եւ այլն: Ավելորդ է խոսել այն ընտանիքների մասին, որտեղ կա քրոնիկ հիվանդ կամ հաշմանդամ կամ զառամյալ որեւէ անդամ, ում դեղորայքային եւ բուժման ծախսերը նույնպես գումարվում են այդ ամբողջ բեռին:

Պետության կողմից տարիներ շարունակ քայլեր չեն ձեռնարկվում պետական հատվածում նորմային մոտ եւ արդարացի աշխատավարձ ապահովելու համար, իսկ մասնավոր հատվածում թերեւս միայն SS եւ որոշ չափով բանկային ոլորտներն են, որտեղ աշխատակիցներն ստանում են իրենց վաստակածին համապատասխան կամ համապատասխանին մոտ եկամուտ:

Սույն նախագծի կարգավորումներով առաջարկվում է առնվազն ապահովել, որ քաղաքացիների կողմից ստացվող նոմինալ մաքուր աշխատավարձն ու կենսաթոշակը որեւէ դեպքում չնվազեն: